ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 29-ին՝ շաբաթ.—Գիտ ճշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեռոյ.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը։

*
* *

Հունիսի 30-ին՝ կիրակի.—Դ կիր. Զկնի Հոգեգալստեան.

Մայր Տաճարում պատարագեց հոգ. տ. Գեորգ վրդ. Սերայդարյանը։

*
* *

Հուլիսի 4-ին՝ Հինգշաբթի.—Սրբոց Թարգմանչացն մեռոց Սահակայ և Մեսրովբայ.

Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում պատարագեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը։ Քարոզեց գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ «Մարգարէասցին ուստերք ձեր և դստերք ձեր, և ծերք ձեր երազովք երազեսցին, և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն» բնաբանով։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ եկեղեցու բարերարների հիշատակին։

*
* *

Հուլիսի 7-ին՝ կիրակի.—Ե կիր. Զկնի Հոգեգալստեան։ Գիտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Կարապետ քհն. Քիլիջյանը։

*
* *

Հուլիսի 14-ին՝ կիրակի.—Զ. կիր. Զկնի Հոգեգալստեան.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հովհաննես քհն. Մարուքյանը։

*
* *

Հուլիսի 21-ին՝ կիրակի.—Վարդավառ։ Պայծառակերպութիւն Տեառն մեռոյ Յիսուսի Քրիստոսի։

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։

*
* *

Հուլիսի 22-ին՝ երկուշաբթի.—Բ որ Վարդավառի։ Յիշատակ մեռելոց։

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Կարապետ քհն. Քիլիջյանը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

*
* *

Հուլիսի 28-ին՝ կիրակի.—Բ կիր. Զկնի Վարդավառի։

Մայր տաճարում պատարագեց վրահայոց թեմի առաջնորդ գեր. տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը։ Քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ «Ի վերայ Աջոյն և սրբոյ էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կա» բնաբանով։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ գեր. տ. Խաչ արքեպ. Աջապահյանի, որ վերջերս վախճանվել է Բեյրութում։